ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 101

ՄԿՐՏԻՉ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀՀՕ 3-րդհոդվածի 1-ինկետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով,ՀՀ Կառացարության 29.12.2011 թ-ի թիվ 1920-ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 10.05.2021թ-ի "Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին" N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Լոռի-1 միկրոռեգիոնալ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը,
Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի ավագանու 06.09.2024թ. թիվ 22-Ա որոշումը, ՀՀ վարչապետի 22.12.2009 թ-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/
քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թ-ի N 2-14 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 13.03.2025թ-ի թիվ 130-Ա որոշումը, քանի որ 2018 թվականին ինքնակամ կառուցված թվով 4 հատ քոթեջատիպ տնակների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող

շահերը, վտանգ չի հանդիսանում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով Մկրտիչ Ղազարյանի (ծնված 12.04.1976թ.) դիմումը, չափագրման համաձայնությունը և 2025UVYNXT մուտքագրման ծածկագրով տեղեկանքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-043-0231-0005 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,03189 հա հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-043-0231-0005 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,03189 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել, այն փոխադրելով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության և համապատասխանեցնել Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթով սահմանված հողամասի նպատակային և գործառնական նշանակությանը:

3.Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-043-0231-0005 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,03189հա հողամասում Մկրտիչ Ղազարյանի կողմից ինքնակամ կառուցված 86.91քմ արտաքին մակերեսով ներքին մակերես 72,61/ ընդհանուր մակերեսով թվթվ 4 քոթեջատիպ տնակների նկատմամբ:

4.Ճանաչել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի սեփականության իրավունքը Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-043-0231-0005 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,03189 հա հողամասի և հողամասում գտնվող օրինականացված 72.66 քմ ընդհանուր մակերեսով քոթեջատիպ տնակների նկատմամբ:

5.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

6.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի 05.06.2025 թ-ի թիվ 96 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 102

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Կառացարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի "Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին" N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Լոռի-1 միկրոռեգիոնալ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի ավագանու 06.09.2024թ. թիվ 22-Ա որոշումը,ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-14 դրական եզրակացությունը,ՀՀ Լոռու մարզպետի 2025թ. մարտի 13-ի թիվ 130-Ա որոշումը, հաշվի առնելով քաղաքացի Մկրտիչ Ղազարյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Մկրտիչ Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող 06-043-0273-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.2879հա մակերեսով խոտհարք գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել և փոխադրելով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, համապատասխանեցնելով Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթով սահմանված հողամասի նպատակային և գործառնական նշանակությանը:

2.Պարտավորեցնել քաղաքացի Մկրտիչ Ղազարյանին Լերմոնտովո համայնքի բյուջե վճարել 1 932 530 ՀՀ դրամ, հողամասերի կադաստրային արժեքների նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 103

ՊՅՈՏՐ ԻՈՆՈՎԻՉ ՇՈՒԲԻՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42 և 43 հոդվածներով, ՀՀ ՔՕ 188 հոդվածով, ՀՀ ՀՕ 60 հոդվածով, ՀՀ կառավարության 18.05.2006 թ-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքով, հիմք ընդունելով հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, անշարժ գույքի համար "ԻՆԷՔՍ" ՍՊԸ-ի /որակավորման վկայական՝ 0202 2012-05-05, ծածկագիր 2024M4CBAV, 2025LYWM4U/ կողմից կազմված հատակագիծը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 13.05.1991 թ-ի թիվ 04 որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 21.04.1993 թ-ի թիվ 71 վկայագիրը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 06-043-0002-0007 ծածկագրի տակ գտնվող 0,22986հա բնակելի կառուցապատման հողամասում անշարժ գույքը՝ համաձայն հատակագծի.

թիվ 1 շինության 37,1քմ արտաքին մակերեսով և 1-ին հարկի 36,1քմ արտաքին մակերեսով

2020 թ-ին ինքնակամ կառուցված վերը նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Պյոտր Իոնովիչ Շուբինի սեփականության իրավունքը:

2.Վերը նշված կառույցները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Ինքնակամ կառույցի օրինականացման համար 75 250 ՀՀ դրամ 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**